



## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ԿՈԼԵԳԻԱ

---

### ՈՐՈՇՈՒՄ

2 հունիսի 2016 թվականի

թիվ 55

քաղ. Մոսկվա

**«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև տեղեկությունների փոխանակման ապահովում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս ապրանքների փաստացի արտահանման հսկողության եւ հաստատման գործընթացում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին**

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում «Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 3 հավելված) 30-րդ կետին համապատասխան եւ ղեկավարվելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 200 որոշմամբ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող՝

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակման ապահովում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս ապրանքների փաստացի արտահանման հսկողության եւ հաստատման գործընթացում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցության կանոնները.

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակման ապահովում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս ապրանքների փաստացի արտահանման հսկողության եւ հաստատման գործընթացում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգը.

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակման ապահովում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս ապրանքների փաստացի արտահանման հսկողության եւ հաստատման գործընթացում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու համար օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությունը.

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակման ապահովում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս ապրանքների փաստացի արտահանման հսկողության եւ հաստատման գործընթացում» ընդհանուր գործընթացին միանալու կարգը:

2. Մահմանեյ, որ՝

ա) սույն Որոշմամբ հաստատված նկարագրությամբ նախատեսված էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների տեխնիկական սխեմաների մշակումն ու արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տեղեկատվական փոխգործակցությունն իրագործելիս օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների ռեեստրում դրանց զետեղման ապահովումն իրականացվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի այն դեպարտամենտի կողմից, որի իրավասության մեջ է մտնում Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքների համակարգումը,

բ) սույն Որոշմամբ հաստատված կարգի 6-8-րդ կետերին համապատասխան միանալու ընթացակարգի իրականացման ժամկետը կազմում է 1 տարի՝ սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 80 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝

Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կոլեգիայի  
2016 թվականի հունիսի 2-ի  
թիվ 55 որոշմամբ

## ԿԱՆՈՆՆԵՐ

**«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների  
մաքսային մարմինների միջև տեղեկությունների փոխանակման  
ապահովում Եվրասիական տնտեսական միության մաքսային  
տարածքի սահմաններից դուրս ապրանքների փաստացի  
արտահանման հսկողության եւ հաստատման գործընթացում»  
ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի  
ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս  
տեղեկատվական փոխգործակցության**

### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնները մշակվել են Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի մաս կազմող հետեւյալ ակտերին համապատասխան՝

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիր.

Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանումը մեկնման վայրում տեղակայված մաքսային մարմնի կողմից հաստատելու կարգի մասին» թիվ 330 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի «Ընդհանուր գործընթացներն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին» թիվ 200 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունվարի 27-ի «Արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տվյալների էլեկտրոնային փոխանակման կանոնները հաստատելու մասին» թիվ 5 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների ցանկի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի օգոստոսի 19-ի թիվ 132 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 29 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրության մեթոդիկայի մասին» թիվ 63 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի սեպտեմբերի 28-ի «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պետական իշխանության մարմինների միջեւ եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ անդրսահմանային փոխգործակցության ժամանակ էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման վերաբերյալ հիմնադրույթի հաստատման մասին» թիվ 125 որոշում:

Սույն կանոնները մշակվել են՝ հաշվի առնելով Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 2015 թվականի հունիսի 4-ի թիվ 15/6 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ

ապրանքների փաստացի արտահանման հսկողության եւ հաստատման համակարգերի օգտագործմամբ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով ապրանքների փաստացի արտահանումը հաստատելու վերաբերյալ տեղեկատվության փոխանակման տեխնոլոգիայի դրույթները:

## II. Կիրառության ոլորտը

2. Սույն կանոնները մշակվել են «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակման ապահովում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս ապրանքների փաստացի արտահանման հսկողության եւ հաստատման գործընթացում» ընդհանուր գործընթացի (այսուհետ՝ ընդհանուր գործընթաց) մասնակիցների միջեւ տեղեկատվական փոխգործակցության կարգն ու պայմանները, այդ թվում՝ այդ ընդհանուր գործընթացի շրջանակներում կատարվող ընթացակարգերի նկարագրությունը սահմանելու նպատակով:

3. Սույն կանոնները կիրառվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների կողմից ընդհանուր գործընթացի շրջանակներում ընթացակարգերի եւ գործառնությունների կատարման կարգը հսկելիս, ինչպես նաեւ ընդհանուր գործընթացի իրագործումն ապահովող տեղեկատվական համակարգերի բաղադրիչները նախագծելիս, մշակելիս եւ լրամշակելիս:

## III. Հիմնական հասկացությունները

4. Սույն կանոնների նպատակներով գործածվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

«ավտորիզացում»՝ ընդհանուր գործընթացի կոնկրետ մասնակցին որոշակի գործողությունների կատարման իրավունքների տրամադրում.

«ընդհանուր գործընթացի ընթացակարգերի խումբ»՝ ընդհանուր գործընթացի ընթացակարգեր, որոնք միավորված են ընդհանուր գործընթացի առանձնահատկությամբ պայմանավորված որոշակի հատկանիշով:

Սույն կանոններում օգտագործվող «ընդհանուր գործընթացի ընթացակարգերի խումբ», «ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտ», «կատարող», «ընդհանուր գործընթացի գործառնություն», «ընդհանուր գործընթացի ընթացակարգ» եւ «ընդհանուր գործընթացի մասնակից» հասկացությունները կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ 63 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրության մեթոդիկայով սահմանված իմաստներով:

#### IV. Ընդհանուր գործընթացի վերաբերյալ հիմնական տեղեկություններ

5. Ընդհանուր գործընթացի լրիվ անվանումը՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակման ապահովում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս ապրանքների փաստացի արտահանման հսկողության եւ հաստատման գործընթացում»:

6. Ընդհանուր գործընթացի ծածկագրային նշագիրը՝ P.CP.02, տարբերակը՝ 1.0.0:

#### 1. Ընդհանուր գործընթացի նպատակը եւ խնդիրները

7. Ընդհանուր գործընթացի նպատակը Միության մեկ անդամ պետությունում (այսուհետ՝ անդամ պետություն) Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանում նախատեսող մաքսային ընթացակարգին համապատասխան բաց թողնված եւ Միության մաքսային տարածքի

սահմաններից դուրս մեկ այլ անդամ պետությունում արտահանվող ապրանքների հսկողության, ինչպես նաև այդպիսի ապրանքների տեղափոխման դիտանցման արդյունավետության բարձրացումն է անդամ պետությունների լիազորված մարմինների միջև տեղեկատվական փոխգործակցության մեխանիզմների կատարելագործման հաշվին:

8. Ընդհանուր գործընթացի նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

ա) ապահովել անդամ պետությունների լիազորված մարմինների միջև ապրանքների փաստացի արտահանման նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկությունների ավտոմատացված փոխանակումը՝ օգտագործելով արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգ՝ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան,

բ) ապահովել արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի տվյալների ընդհանուր մոդելի օգտագործման հիման վրա կառուցված էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների միասնականացված կառուցվածքների կիրառումը,

գ) ապահովել անդամ պետությունների լիազորված մարմինների միջև տեղեկատվական փոխգործակցությունը՝ ապրանքների մասին հայտարարագրի տեղեկությունների վերաբերյալ հարցում կատարելու եւ Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանումը հաստատող տեղեկություններ (այսուհետ՝ ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ) ներկայացնելու նպատակով,

դ) ապահովել ապրանքների սահմանված խմբաքանակի փաստացի արտահանումը հաստատելու նկատմամբ հսկողության համար անհրաժեշտ տեղեկատվության ներկայացումն անդամ պետությունների լիազորված մարմինների հարցմամբ այն դեպքում, երբ նշված տեղեկատվությունը ներկայացնելը նախատեսված է Միության իրավունքի մաս կազմող ակտերով:



2. Ընդհանուր գործընթացի մասնակիցները

9. Ընդհանուր գործընթացի մասնակիցների ցանկը բերված է 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1

Ընդհանուր գործընթացի մասնակիցների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CP.02.ACT.001	լիազորված մարմին, որն իրականացնում է ապրանքների բացթողումը	մաքսային գործի բնագավառում լիազորված՝ անդամ պետության գործադիր իշխանության մարմին, որի համակարգում իրականացվում են ապրանքների բացթողում՝ Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանումը թույլատրող մաքսային ընթացակարգին համապատասխան, ինչպես նաև փաստացի արտահանված ապրանքների քանակի հաշվառում
P.CP.02.ACT.002	լիազորված մարմին, որը ձեռակերպում է ապրանքների մեկնման թույլտվությունը	մաքսային գործի բնագավառում լիազորված՝ անդամ պետության գործադիր իշխանության մարմին, որի համակարգում Միության մաքսային տարածքից ապրանքներն արտահանելու դեպքում կատարվում են մաքսային գործառնություններ, եւ իրականացվում է մաքսային հսկողություն

### 3. Ընդհանուր գործընթացի կառուցվածքը

10. Ընդհանուր գործընթացն ըստ իրենց նշանակության խմբավորված ընթացակարգերի ամբողջությունն է՝

ա) Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման գործընթացում դրանց փաստացի արտահանման նկատմամբ հսկողության տեղեկատվական ապահովման ընթացակարգեր,

բ) անդամ պետության լիազորված մարմնի հարցմամբ ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգեր:

11. Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման ընթացակարգում դրանց փաստացի արտահանման նկատմամբ հսկողության տեղեկատվական ապահովման ընթացակարգերի խմբի մեջ մտնող ընդհանուր գործընթացի ընթացակարգերը կատարելիս իրականացվում է Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանման հսկողության եւ հաստատման համար անհրաժեշտ տեղեկությունների փոխանակում:

Նշված ընթացակարգերը կատարելիս իրականացվում են հետեւյալ գործողությունները՝


Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս ապրանքների արտահանումը թույլատրող մաքսային ընթացակարգին համապատասխան բաց թողնված ապրանքների մասին տեղեկությունների հարցում եւ ներկայացում.

ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմին ապրանքների փաստացի արտահանման, այդ թվում՝ ավելի վաղ ուղարկված տեղեկությունները չեղյալ համարելու մասին տեղեկությունների ներկայացում:

Անդամ պետության լիազորված մարմնի հարցմամբ ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խմբի մեջ մտնող ընդհանուր գործընթացի ընթացակարգերը կատարելիս իրականացվում են ապրանքների արտահանման փաստերի մասին

տեղեկությունների հարցում եւ հարցված տեղեկությունների ներկայացում ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմնի կողմից:

12. Ընդհանուր գործընթացի կառուցվածքի բերված նկարագրությունը ներկայացված է 1-ին նկարում:



Նկ. 1. Ընդհանուր գործընթացի կառուցվածքը

13. Ընդհանուր գործընթացի՝ ըստ իր նշանակության խմբավորված ընթացակարգերի կատարման կարգը, այդ թվում՝ գործառնությունների մանրամասն նկարագրությունը, բերված է սույն կանոնների VIII բաժնում:

14. Ընթացակարգերի յուրաքանչյուր խմբի համար բերվում է ընդհանուր գործընթացի ընթացակարգերի միջեւ առկա կապերը եւ դրանց կատարման կարգն արտացոլող ընդհանուր սխեման: Ընթացակարգերի ընդհանուր սխեման կառուցված է UML գրաֆիկական նոտացիայի (մոդելավորման միասնականացված լեզու՝ Unified Modeling Language) օգտագործմամբ եւ ապահովված է տեքստային նկարագրությամբ:

4. Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման գործընթացում դրանց փաստացի արտահանման նկատմամբ հսկողության տեղեկատվական ապահովման ընթացակարգերի խումբը

15. Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման ընթացակարգում դրանց փաստացի արտահանման նկատմամբ հսկողություն իրականացնելիս ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմինն ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմնից հարցում է կատարում ապրանքների մասին այն հայտարարագրի տեղեկությունների վերաբերյալ, որին համապատասխան ապրանքները ձեւակերպվել են Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս ապրանքների արտահանումը թույլատրող մաքսային ընթացակարգով: Ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմինը ներկայացնում է տեղեկություններ ապրանքների մասին հայտարարագրից, այդ թվում՝ տեղեկություններ արտահանման ենթակա ապրանքների մնացորդների (դրանց քանակական բնութագրերի) վերաբերյալ, կամ տեղեկություններ հարցվող տեղեկատվության բացակայության վերաբերյալ: Ընդ որում, կատարվում է «Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների հարցում» ընթացակարգը (P.CP.02.PRC.001):

Նշված տեղեկությունները ներկայացվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 55 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակման ապահովում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս ապրանքների փաստացի արտահանման հսկողության եւ հաստատման գործընթացում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին (այսուհետ՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգ)

համապատասխան: Ներկայացվող տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 55 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակման ապահովում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս ապրանքների փաստացի արտահանման հսկողության եւ հաստատման գործընթացում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու համար օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը (այսուհետ՝ էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրություն):

Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման թույլտվության ձեւակերպման մասին որոշում ընդունելու դեպքում ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմինն ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմին է ուղարկում ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ: Ընդ որում, կատարվում է «Ապրանքների փաստացի արտահանման հաստատում» ընթացակարգը (P.CP.02.PRC.002):

Այն դեպքում, երբ ապրանքները դուրս չեն բերվել մեկնման վայրերից եւ ենթակա են վերադարձի Միության մաքսային տարածք, այդպիսի ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունները կարող են չեղյալ համարվել: Ընդ որում, կատարվում է «Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների չեղյալ համարում» ընթացակարգը (P.CP.02.PRC.003):

16. Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման գործընթացում դրանց փաստացի արտահանման նկատմամբ հսկողության տեղեկատվական ապահովման ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 2-րդ նկարում:




Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
		իրականացնող լիազորված մարմնի կողմից ապրանքների մասին հայտարարագրից տեղեկություններ ներկայացնելու համար
P.CP.02.PRC.002	ապրանքների փաստացի արտահանման հաստատում	ընթացակարգը նախատեսված է ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմնի կողմից ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմնի ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ ներկայացնելու համար
P.CP.02.PRC.003	ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների չեղյալ համարում	ընթացակարգը նախատեսված է ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմնի կողմից ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմնի ապրանքների փաստացի արտահանման մասին ավելի վաղ ուղարկված տեղեկությունները չեղյալ համարելու մասին տեղեկություններ ներկայացնելու համար

5. Անդամ պետության լիազորված մարմնի հարցմամբ ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խումբը

18. Անդամ պետության լիազորված մարմնի հարցմամբ ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խմբի կատարումն իրականացվում է ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմնում ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների բացակայության դեպքում:

Ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմնի կողմից ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ ներկայացնելու եւ Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանման հաստատման համար արտաքին տնտեսական գործունեության մասնակցի կողմից հիմնավորված դիմում ներկայացնելու դեպքում ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմինն ուղարկում է ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ ներկայացնելու հարցում: Ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմինը ներկայացնում է ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ կամ ուղարկում է հարցվող տեղեկությունների բացակայության մասին ծանուցում: Ընդ որում, կատարվում է «Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների հարցում» ընթացակարգը (P.CP.02.PRC.004):

19. Անդամ պետության լիազորված մարմնի հարցմամբ ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 3-րդ նկարում:



Նկ. 3. Անդամ պետության լիազորված մարմնի հարցմամբ ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեման

20. Անդամ պետության լիազորված մարմնի հարցմամբ ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգի խմբի մեջ մտնող ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 3-րդ աղյուսակում:



Անդամ պետության լիազորված մարմնի հարցմամբ ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգի խմբի մեջ մտնող ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CP.02.PRC.004	ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների հարցում	ընթացակարգը նախատեսված է ապրանքների մեկնման թույլտվությունը ձեռակերպող լիազորված մարմնի կողմից ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմին ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ ներկայացնելու համար

V. Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտները

21. Տեղեկատվական այն օբյեկտների ցանկը, որոնց վերաբերյալ կամ որոնցից տեղեկությունները տեղեկատվական փոխգործակցության գործընթացում փոխանցվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների միջև, բերված է 4-րդ աղյուսակում:

Տեղեկատվական օբյեկտների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CP.02.BEN.001	ապրանքների մասին հայտարարագրից տեղեկություններ	ապրանքների մասին հայտարարագրում պարունակվող տեղեկություններ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CP.02.BEN.002	ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ	Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ

## VI. Ընդհանուր գործընթացի

### մասնակիցների պատասխանատվությունը

22. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի՝ տեղեկատվական փոխգործակցությանը մասնակցող պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները տեղեկությունների ժամանակին ու ամբողջական փոխանցումն ապահովելուն ուղղված պահանջները չկատարելու համար կարգապահական պատասխանատվության են ենթարկվում «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին, Միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերի եւ ակտերի համապատասխան, իսկ անդամ պետությունների լիազորված մարմինների պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

## VII. Ընդհանուր գործընթացի

### տեղեկատուներն ու դասակարգիչները

23. Ընդհանուր գործընթացի տեղեկատուների եւ դասակարգիչների ցանկը բերված է 5-րդ աղյուսակում:

## Ընդհանուր գործընթացի տեղեկատուների եւ դասակարգիչների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Տեսակը	Նկարագրությունը
1	2	3	4
P.CLS.001	աշխարհի երկրների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է երկրների անվանումների ցանկը եւ դրանց համապատասխան ծածկագրերը (կիրառվում է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշմանը համապատասխան)
P.CLS.002	արժույթների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է արժույթների ծածկագրերի եւ անվանումների ցանկը (կիրառվում է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշմանը համապատասխան)
P.CLS.003	Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկ (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ)	դասակարգիչ	պարունակում է ապրանքների ծածկագրերի եւ անվանումների ցանկը, որը հիմնված է Համաշխարհային մաքսային կազմակերպության՝ ապրանքների նկարագրման եւ ծածկագրման ներդաշնակեցված համակարգի եւ Անկախ պետությունների համագործակցության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի վրա
P.CLS.008	կապի տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է կապի տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը (ներդաշնակեցված է ՄԱԿ ԱԷՊԿ-ի «Communication Channel Code» դասակարգչի հետ)
P.CLS.014	մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվող փաստաթղթերի եւ տեղեկությունների տեսակների	դասակարգիչ	պարունակում է մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվող փաստաթղթերի ծածկագրերի եւ անվանումների ցանկը (կիրառվում է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378


Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Տեսակը	Նկարագրությունը
1	2	3	4
	դասակարգիչ		որոշմանը համապատասխան)
P.CLS.015	տրանսպորտի տեսակների եւ ապրանքների տրանսպորտային փոխադրման դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է տրանսպորտային միջոցների տեսակների եւ ապրանքների տրանսպորտային փոխադրման ցանկը եւ դրանց համապատասխան ծածկագրերը (կիրառվում է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշմանը համապատասխան)
P.CLS.023	չափման միավորների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է չափման միավորների ծածկագրերի, պայմանական նշագրերի եւ անվանումների ցանկը (կիրառվում է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշմանը համապատասխան)
P.CLS.025	Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է անդամ պետությունների մաքսային մարմինների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.CLS.026	Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների տեղեկատու	տեղեկատու	պարունակում է անդամ պետությունների լիազորված մարմինների ցանկը

VIII. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերը

1. Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման գործընթացում դրանց փաստացի արտահանման նկատմամբ հսկողության տեղեկատվական ապահովման ընթացակարգեր

«Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների հարցում»  
 ընթացակարգ (RCP.02.PRC.001)

24. «Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների հարցում» ընթացակարգի (P.CP.02.PRC.001) կատարման սխեման ներկայացված է 4-րդ նկարում:



Նկ. 4. «Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների հարցում» ընթացակարգի (P.CP.02.PRC.001) կատարման սխեման

25. «Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների հարցում» ընթացակարգը (P.CP.02.PRC.001) կատարվում է մեկ անդամ պետությունում Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս ապրանքների արտահանում

նախատեսող մաքսային ընթացակարգին համապատասխան բաց թողնված ապրանքները Միության մաքսային տարածքից մեկնման՝ այլ անդամ պետության տարածքում տեղակայված վայր ժամանելիս եւ մաքսային հայտարարագրում նշված ապրանքների մասին տեղեկությունների եւ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների ստուգում իրականացնելիս:

26. Առաջինը կատարվում է «Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների հարցում» գործառնությունը (P.CP.02.OPR.001), որի կատարման արդյունքներով ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմնի կողմից ձեւակերպվում եւ ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմին է փոխանցվում ապրանքների մասին հայտարարագրից տեղեկություններ ներկայացնելու հարցում:

27. Ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմնի կողմից ապրանքների մասին հայտարարագրից տեղեկություններ ներկայացնելու հարցում ստանալու դեպքում կատարվում է «Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների ներկայացում» գործառնությունը (P.CP.02OPR.002), որի կատարման արդյունքներով ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմին ներկայացվում են տեղեկություններ ապրանքների մասին այն հայտարարագրից, որով իրականացվել է ապրանքների բացթողումը՝ Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս ապրանքների արտահանում նախատեսող մաքսային ընթացակարգին համապատասխան: Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունները ներկայացվում են՝ հաշվի առնելով Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս նախկինում արտահանված ապրանքի քանակը: Այն դեպքում, երբ ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմնում բացակայում են հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունները, ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմին է ուղարկվում այդպիսի տեղեկությունների բացակայության մասին ծանուցում:

28. Ապրանքների մեկնման թույլտվությունը ձեռակերպող լիազորված մարմնի կողմից ապրանքների մասին հայտարարագրից տեղեկություններ կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցում ստացվելու դեպքում կատարվում է «Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.CP.02.OPR.003):

29. «Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների հարցում» ընթացակարգի (P.CP.02.PRC.001) կատարման արդյունք են համարվում ապրանքների մեկնման թույլտվությունը ձեռակերպող լիազորված մարմնի կողմից ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցման ընդունումն ու մշակումը:

30 «Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների հարցում» ընթացակարգի (P.CP.02.PRC.001) շրջանակներում կատարվող ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 6-րդ աղյուսակում:

Աղյուսակ 6

«Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների հարցում»  
 ընթացակարգի (P.CP.02.PRC.001) շրջանակներում կատարվող  
 ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CP.02.OPR001	ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների հարցում	բերված է սույն կանոնների 7-րդ աղյուսակում
P.CP.02.OPR.002	ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների ներկայացում	բերված է սույն կանոնների 8-րդ աղյուսակում

P.CP.02.OPR.003	ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների ընդունում և նշակում	բերված է սույն կանոնների 9-րդ աղյուսակում
-----------------	---	---

Աղյուսակ 7

«Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների հարցում»

գործառնության (P.CP.02.OPR.001) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CP.02.OPR.001
2	Գործառնության անվանումը	ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների հարցում
3	Կատարողը	լիազորված մարմին, որը ձեռակերպում է ապրանքների մեկնման թույլտվությունը
4	Կատարման պայմանները	կատարվում է մեկ անդամ պետությունում Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս ապրանքների արտահանում նախատեսող մաքսային ընթացակարգին համապատասխան բաց թողնված ապրանքները Միության մաքսային տարածքից մեկնման՝ այլ անդամ պետության տարածքում տեղակայված վայր ժամանելիս և մաքսային հայտարարագրում նշված ապրանքների մասին տեղեկությունների և տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների ստուգում իրականացնելիս
5	Սահմանափակումները	հարցման ձեռնարկում ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի և տեղեկությունների ձեռնարկների ու կառուցվածքների նկարագրությանը: Հարցումը պետք է վավերացվի Էլեկտրոնային թվային ստորագրությամբ (Էլեկտրոնային ստորագրությամբ)
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը ձեռակերպում ու ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմին է ուղարկում ապրանքների մասին հայտարարագրից



Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
		տեղեկություններ ներկայացնելու հարցում՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների հարցումը փոխանցվել է ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմին

### Աղյուսակ 8

«Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների  
ներկայացում» գործառնության (P.CP.02.OPR.002) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CP.02.OPR.002
2	Գործառնության անվանումը	ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների ներկայացում
3	Կատարողը	լիազորված մարմին, որն իրականացնում է ապրանքների բացթողումը
4	Կատարման պայմանները	կատարվում է կատարողի կողմից ապրանքների մասին հայտարարագրից տեղեկություններ ներկայացնելու հարցում ստացվելու («Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների հարցում» գործառնություն (P.CP.02.OPR.001)) դեպքում
5	Սահմանափակումները	հարցման ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը: Պահանջվում է ավտորիզացում. տեղեկությունների

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
		հարցումը կատարվում է միայն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն իրականացնում է հարցման մշակում՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան, ձեւակերպում է ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմին է ներկայացնում ապրանքների մասին հայտարարագրից տեղեկություններ: Այն դեպքում, երբ ապրանքը նախկինում մասամբ արտահանվել է հարցման մեջ նշված հայտարարագրով, արտահանվող ապրանքների մնացորդների վերաբերյալ տեղեկություններում նշվում են մնացած ապրանքի քանակական արժեքները: Այն դեպքում, երբ ապրանքն ամբողջությամբ արտահանվել է հարցման մեջ նշված հայտարարագրով, արտահանվող ապրանքների մնացորդների վերաբերյալ տեղեկությունները նշվում են զրոյին հավասար: Հարցման պարամետրերը բավարարող ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների բացակայության դեպքում ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմին է ուղարկվում նշված տեղեկությունների բացակայության մասին ծանուցում
7	Արդյունքները	ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմին են ներկայացվել ապրանքների մասին հայտարարագրից տեղեկություններ, կամ ուղարկվել է հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցում


«Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնության (P.CP.02.OPR.003) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CP.02.OPR.003
2	Գործառնության անվանումը	ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների ընդունում եւ մշակում
3	Կատարողը	լիազորված մարմին, որը ձեւակերպում է ապրանքների մեկնման թույլտվությունը
4	Կատարման պայմանները	կատարվում է կատարողի կողմից ապրանքների մասին հայտարարագրից տեղեկություններ կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցում ստացվելու («Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների ներկայացում» գործառնություն (P.CP.02.OPR.002)) դեպքում
5	Սահմանափակումները	ներկայացվող տեղեկությունների կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցման ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը: Էլեկտրոնային փաստաթղթի (տեղեկությունների) վավերապայմանները պետք է համապատասխանեն Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգով նախատեսված պահանջներին
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն իրականացնում է ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցման ընդունում եւ մշակում
7	Արդյունքները	ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունները կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցումը մշակվել են

«Ապրանքների փաստացի արտահանման հաստատում»

ընթացակարգ (P.CP.02.PRC.002)

31. «Ապրանքների փաստացի արտահանման հաստատում» ընթացակարգի (P.CP.02.PRC.002) կատարման սխեման ներկայացված է 5-րդ նկարում:



Նկ. 5. «Ապրանքների փաստացի արտահանման հաստատում» ընթացակարգի (P.CP.02.PRC.002) կատարման սխեման

32. «Ապրանքների փաստացի արտահանման հաստատում» ընթացակարգը (P.CP.02.PRC.002) կատարվում է ապրանքների մեկնման թույլտվությունը ձևակերպող լիազորված մարմնի կողմից Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման թույլտվության ձևակերպման մասին որոշում ընդունվելու դեպքում:

33. Առաջինը կատարվում է «Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների ներկայացում» գործառնությունը (P.CP.02.OPR.004), որի կատարման արդյունքներով ապրանքների մեկնման թույլտվությունը ձևակերպող

լիազորված մարմնի կողմից ձեւակերպվում եւ ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմին են ներկայացվում ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ:

34. Ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմնի կողմից ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ ստացվելու դեպքում կատարվում է «Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.CP.02.OPR.005), որի կատարման արդյունքներով իրականացվում են նշված տեղեկությունների ընդունումն ու մշակումը: Ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմին է ուղարկվում ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների մշակման մասին ծանուցում:

35. Ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմնի կողմից ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների մշակման մասին ծանուցում ստացվելու դեպքում կատարվում է «Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների մշակման մասին ծանուցման ստացում» գործառնությունը (P.CP.02.OPR.006), որի կատարման արդյունքներով իրականացվում են նշված ծանուցման ընդունումն ու մշակումը:

36. «Ապրանքների փաստացի արտահանման հաստատում» ընթացակարգի (P.CP.02.PRC.002) կատարման արդյունք է համարվում ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմնում ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների մշակումը:

37. «Ապրանքների փաստացի արտահանման հաստատում» ընթացակարգի (P.CP.02.PRC.002) շրջանակներում կատարվող ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 10-րդ աղյուսակում:

«Ապրանքների փաստացի արտահանման հաստատում» ընթացակարգի (P.CP.02.PRC.002) շրջանակներում կատարվող ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CP.02.OPR.004	ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների ներկայացում	բերված է սույն կանոնների 11-րդ աղյուսակում
P.CP.02.OPR.005	ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում	բերված է սույն կանոնների 12-րդ աղյուսակում
P.CP.02.OPR.006	ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների մշակման մասին ծանուցման ստացում	բերված է սույն կանոնների 13-րդ աղյուսակում

«Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների ներկայացում» գործառնության (P.CP.02.OPR.004) նկարագրությունը

Թիվը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CP.02.OPR.004
2	Գործառնության անվանումը	ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների ներկայացում
3	Կատարողը	լիազորված մարմին, որը ձեւակերպում է ապրանքների մեկնման թույլտվությունը
4	Կատարման պայմանները	կատարվում է Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպելու մասին որոշում ընդունվելու դեպքում

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
5	Սահմանափակումները	ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների ձեռագրային ու կառուցվածքը պետք է համապատասխանեն էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեռագրային ու կառուցվածքների նկարագրությանը: Ապրանքների փաստացի արտահանման մասին ներկայացվող տեղեկությունները պետք է վավերացվեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ (էլեկտրոնային ստորագրությամբ)
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը ձեռագրային եւ ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմին է ներկայացնում ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունները ներկայացվել են ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմին

Աղյուսակ 12

«Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնության (P.CP.02.OPR.005) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CP.02.OPR.005
2	Գործառնության անվանումը	ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում
3	Կատարողը	լիազորված մարմին, որն իրականացնում է ապրանքների բացթողումը
4	Կատարման պայմանները	կատարվում է կատարողի կողմից ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ ստացվելու («Ապրանքների փաստացի

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
		արտահանման մասին տեղեկությունների ներկայացում» գործառնություն (P.CP.02.OPR.004)) դեպքում
5	Սահմանափակումները	ներկայացվող տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը: Էլեկտրոնային փաստաթղթի (տեղեկությունների) վավերապայմանները պետք է համապատասխանեն Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգով նախատեսված պահանջներին
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն իրականացնում է ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում, ձեւակերպում եւ ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմին է ուղարկում տեղեկությունների մշակման մասին ծանուցում
7	Արդյունքները	ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունները մշակվել են, տեղեկությունների մշակման մասին ծանուցումն ուղարկվել է ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմին

Աղյուսակ 13

«Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների  
մշակման մասին ծանուցման ստացում» գործառնության  
(P.CP.02.OPR.006) նկարագրությունը


Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CP.02.OPR.006



Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
2	Գործառնության անվանումը	ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների մշակման մասին ծանուցման ստացում
3	Կատարողը	լիազորված մարմին, որը ձեռակերպում է ապրանքների մեկնման թույլտվությունը
4	Կատարման պայմանները	կատարվում է կատարողի կողմից ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների մշակման մասին ծանուցում ստացվելու («Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնություն (P.CP.02.OPR.005)) դեպքում
5	Սահմանափակումները	ծանուցման ձեռագրին ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեռագրերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն իրականացնում է ծանուցման ընդունում եւ մշակում՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների մշակման մասին ծանուցումը մշակվել է

«Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների չեղյալ համարում» ընթացակարգ (P.CP.02.PRC.003)

38. «Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների չեղյալ համարում» ընթացակարգի (P.CP.02.PRC.003) կատարման սխեման ներկայացված է 6-րդ նկարում:



Նկ. 6. «Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների չեղյալ համարում» ընթացակարգի (P.CP.02.PRC.003) կատարման սխեման

39. «Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների չեղյալ համարում» ընթացակարգը (P.CP.02.PRC.003) կատարվում է այն դեպքում, երբ մեկնման թույլտվությունը ձեւակերպելուց հետո ապրանքները դուրս չեն բերվել մեկնման վայրերից եւ ենթակա են վերադարձի Միության մաքսային տարածք:

40. Առաջինը կատարվում է «Ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների ներկայացում» գործառնությունը (P.CP.02.OPR.007), որի կատարման արդյունքներով ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմնում ձեւակերպվում է ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմին եւ ներկայացվում ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկություններ:

41. Ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմնի կողմից ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկություններ ստացվելու դեպքում կատարվում է «Ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.CP.02.OPR.008), որի կատարման արդյունքներով իրականացվում են նշված տեղեկությունների ընդունումն ու մշակումը: Ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմին է ուղարկվում ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների մշակման մասին ծանուցում:

42. Ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմնի կողմից ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների մշակման մասին ծանուցում ստացվելու դեպքում կատարվում է «Ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.CP.02.OPR.009), որի կատարման արդյունքներով իրականացվում են նշված ծանուցման ընդունումն ու մշակումը:

43. «Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների չեղյալ համարում» ընթացակարգի (P.CP.02.PRC.003) կատարման արդյունք է համարվում ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմնում ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների մշակումը:

44. «Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների չեղյալ համարում» ընթացակարգի (P.CP.02.PRC.003) շրջանակներում կատարվող ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 14-րդ աղյուսակում:

«Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների չեղյալ համարում» ընթացակարգի (P.CP.02.PRC.003) շրջանակներում կատարվող ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CP.02.OPR.007	ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների ներկայացում	բերված է սույն կանոնների 15-րդ աղյուսակում
P.CP.02.OPR.008	ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում	բերված է սույն կանոնների 16-րդ աղյուսակում
P.CP.02.OPR.009	ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների մշակման մասին ծանուցման ստացում	բերված է սույն կանոնների 17-րդ աղյուսակում

«Ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.CP.02.OPR.007) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CP.02.OPR.007
2	Գործառնության անվանումը	ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների ներկայացում

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
3	Կատարողը	լիազորված մարմին, որը ձեռակերպում է ապրանքների մեկնման թույլտվությունը
4	Կատարման պայմանները	կատարվում է ապրանքները Միության մաքսային տարածք վերադարձնելու մասին որոշում ընդունելիս
5	Սահմանափակումները	ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների ձեռնարկում ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեռնարկների ու կառուցվածքների նկարագրությանը: Ներկայացվող տեղեկությունները պետք է վավերացվեն Էլեկտրոնային թվային ստորագրությամբ (Էլեկտրոնային ստորագրությամբ)
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը ձեռակերպում է ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունները եւ դրանք ներկայացնում է ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմին՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունները ներկայացվել են ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմին

«Ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնության (P.CP.02.OPR.008) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CP.02.OPR.008
2	Գործառնության անվանումը	ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում
3	Կատարողը	լիազորված մարմին, որն իրականացնում է ապրանքների բացթողումը
4	Կատարման պայմանները	կատարվում է կատարողի կողմից ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկություններ ստացվելու («Ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների ներկայացում» գործառնություն (P.CP.02.OPR.007)) դեպքում
5	Սահմանափակումները	ներկայացվող տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը: Էլեկտրոնային փաստաթղթի (տեղեկությունների) վավերապայմանները պետք է համապատասխանեն Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգով նախատեսված պահանջներին
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն իրականացնում է ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում, ձեւակերպում եւ ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմին է ուղարկում նշված տեղեկությունների մշակման մասին ծանուցումը
7	Արդյունքները	ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունները մշակվել են, տեղեկությունների մշակման մասին ծանուցումն

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
		ուղարկվել է ապրանքների մեկնման թույլտվությունը ձեռակերպող լիազորված մարմին

Աղյուսակ 17


«Ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ  
համարելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում»  
գործառնության (P.CP.02.OPR.009) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CP.02.OPR.009
2	Գործառնության անվանումը	ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների մշակման մասին ծանուցման ստացում
3	Կատարողը	լիազորված մարմին, որը ձեռակերպում է ապրանքների մեկնման թույլտվությունը
4	Կատարման պայմանները	կատարվում է կատարողի կողմից ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների մշակման մասին ծանուցում ստացվելու («Ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնություն (P.CP.02.OPR.008)) դեպքում
5	Սահմանափակումները	ծանուցման ձեռաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեռաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն իրականացնում է ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների մշակման մասին ծանուցման ընդունում եւ մշակում՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	ապրանքների փաստացի արտահանման հաստատումը չեղյալ համարելու մասին տեղեկությունների մշակման մասին ծանուցումը մշակվել է

2. Անդամ պետության լիազորված մարմնի հարցմամբ ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների ներկայացնելու ընթացակարգեր

«Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների հարցում» ընթացակարգ (P.CP.02.PRC.004)

45. «Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների հարցում» ընթացակարգի (P.CP.03.PRC.007) կատարման սխեման ներկայացված է 7-րդ նկարում:



Նկ. 7. «Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների հարցում» ընթացակարգի (P.CP.02.PRC.004) կատարման սխեման

46. «Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների հարցում» ընթացակարգը (P.CP.02.PRC.004) կատարվում է ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմնում ապրանքների փաստացի



արտահանման մասին տեղեկությունների բացակայության եւ արտաքին տնտեսական գործունեության մասնակցի կողմից հիմնավորված դիմում ներկայացվելու դեպքում՝ Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանումը հաստատելու համար: Մի քանի անդամ պետությունների՝ ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմիններում տեղեկություններ ստանալու անհրաժեշտության դեպքում ընթացակարգը կատարվում է յուրաքանչյուր անդամ պետության համար առանձին:

47. Առաջինը կատարվում է «Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների հարցում» գործառնությունը (P.CP.02.OPR.010), որի կատարման արդյունքներով ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմնի կողմից ձեւակերպվում եւ ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմին է ուղարկվում ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ ներկայացնելու հարցում:

48. Ապրանքների մեկնման թույլտվությունը ձեւակերպող լիազորված մարմնի կողմից ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ ներկայացնելու հարցում ստացվելու դեպքում կատարվում է «Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների ներկայացում» գործառնությունը (P.CP.02.OPR.011), որի կատարման արդյունքներով ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմին են ներկայացվում ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ, կամ ուղարկվում է հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցում:

49. Ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմնի կողմից ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկություններ կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցում ստացվելու դեպքում կատարվում է «Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.CP.02.OPR.012):

50. «Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների հարցում» ընթացակարգի (P.CP.02.PRC.004) կատարման արդյունք են համարվում ապրանքների բացթողումն իրականացնող լիազորված մարմնի կողմից ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցման ընդունումն ու մշակումը:

51. «Ապրանքների փաստացի արտահանման մասին տեղեկությունների հարցում» ընթացակարգի (P.CP.02.PRC.004) շրջանակներում կատարվող ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 18-րդ աղյուսակում:\

Աղյուսակ 18

